ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ մայիսի 23-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Գորայք համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 8 քաղաքացի, որոնք դիմել են դրամական օգնության, ցածր տոկոսադրույքով հիփոթեքային վարկ վերցնելու, հողամասի սեփականաշնորհման, զոհված զինծառայողների շիրմաքարերի տեղադրման, միջհամայնքային տրանսպորտի կարգավորման, բրուցելոզից անկած անասունների փոխհատուցման, պարարտանյութով և սերմացուով ապահովելու, քամուց վնասված տանիքի վերանորոգման հարցերով:

Դրամական օգնության դիմումին տրվել է դրական լուծում:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում են ցածր տոկոսադրույքով հիփոթեքային վարկ վերցնելու, հողամասի սեփականաշնորհման, զոհված զինծառայողների շիրմաքարերի, միջհամայնքային տրանսպորտի կարգավորման, բրուցելոզից անկած անասունների փոխհատուցման, պարարտանյութով և սերմացուով ապահովելու, քամուց վնասված տանիքի վերանորոգման վերաբերյալ դիմումները: